

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ղեկավարի կողմից 2013թ. հունվարի 1-ից մինչև հուլիսի 1-ը կատարած աշխատանքների մասին Ներկայացված է 10.07.2013թ. համայնքի ժողովում:
/Ձեկ. համայնքի ղեկավար Մ.Պետրոսյան/

Հարգելի տանձուտցիներ և հյուրեր թույլ տվեք Ձեզ ներկայացնելու Տանձուտի գյուղապետարանի և ավագանու կողմից 2013թ-ի հունվարի 1-ից մինչև հուլիսի 1-ը կատարած աշխատանքները:

Ընթացիկ ժամանակաշրջանում անցկացրել ենք 6 ավագանու նիստ՝ կայացրել է 25 որոշումներ: Պատասխանել ենք ստացվող բոլոր 72 գրություններին և 37 դիմումներին, համայնքի ղեկավարի կողմից հաշվետու ժամանակաշրջանում ընդունվել է 39 որոշում և արձակվել է 7 կարգադրություն:

Համայնքում 1-ին կիսամյակում սիստեմատիկ կատարվել է աղբաթափում:

Գյուղապետարանում ստեղծվել է հանձնաժողով կատարվել է անասունների և համայնքի տարածքում գտնվող հողերի և ցանքերի հաշվառում: Հանձնաժողովի կողմից կատարվել է մայիսի 12-ի կարկտահարությունից վնասված 150,17 հա հողատարածքների հաշվառման աշխատանքներ:

Տուժած թվով 92 հողօգտագործողներին անհատույց հատկացվել է սերմեր /մերուկ 10կգ., լոլիկ 4կգ, եգիպտացորեն 100 կգ., առվույտ 200 կգ., արևածաղիկ 25 կգ., դդում 1 կգ., վարունգ 35 կգ./, թվով 300 ընտանիքներին 3000 լիտր դիզ.վառելիք և 326 հողօգտագործողներին զիճվել է 2600000 դրամ հողի հարկեր:

Մայիսի 9-ի կապակցությամբ կազմակերպվել է միջոցառում և նվերներ ենք հանձնել պատերազմի վետերանին և արցախի ազատամարտիկներին:

Մեծ հաղթանակի 66-րդ տարելիցի նախօրյակին խնամվել է գյուղի կենտրոնում գտնվող հուշարձան կոթողը և կազմակերպվել է միջոցառում, տրվել է դրամական օգնություն պատերազմի վետերանին և արցախի ազատամարտիկներին: Դրամական օգնություն է տրվել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին:

Գյուղապետարանը ավագանու անդամների հետ կազմակերպված ձևով անցկացրել է զարմանալի գորահավաքը: Զինակոչիկների և նրանց ծնողների հետ անցկացրել ենք ռազմահայրենասիրական թեմայով զրույցներ, որի արդյունքում ոչ մի զինակոչիկ չի խուսափել զինվորական ծառայությունից:

Գյուղում գործում է 19-րդ դարի եկեղեցի, որը օգնում է համայնքի բնակչության հոգևոր դաստիարակությանը :

Ընթացիկ տարում կատարվել է համայնքի կոյուղու ցանցի մաքրման աշխատանքներ : Սահմանված կարգով կազմակերպվել է գույքահարկի և հողի հարկի գանձման աշխատանքները :

Կատարվել է խմելու ջրի ջրագծերի վթարների վերացման աշխատանքներ :

Հողի հարկի 1-ին կիսամյակի պլանը նախատեսված է 3100.0 հ.դ., փաստացի կատարվել է 1837.5 հ.դ., 59.2% -ով :

Վարձակալական հողերի վարձավճարների 1-ին կիսամյակի պլանը 711.0 հ.դ., փաստացի կատարվել է 426.5 հ.դ., 60% -ով :

Գույքահարկի գանձում 1-ին կիսամյակի պլանով նախատեսվել է 1128.6 հազ. դրամ, փաստացի կատարվել է 786.5 հազ. դրամ, 69.7% -ով :

Խմելու ջրի վարձերի 1-ին կիսամյակի պլանը 1000.0 հ.դ. դրամ փաստացի կատարվել է 35.4 հ.դր. 3.5% -ով :

Պետությունից ստացված դոտացիան կատարվել է 100% ով 10726.0 հազ. դրամ :

Գյուղապետարանը մասնակցել է դպրոցի վերջին զանգի միջոցառմանը, շրջանավարտներին տրվել է դրամական օգնություն :

Հունիսի 1-ից համայնքում գործում է մանկապարտեզ, որտեղ հաճախում են 48 երեխա :

Աշխատավարձի պարտք չունի

Համայնքն ունի բազմաթիվ չլուծված խնդիրներ: Հետագա ծրագրերում նախատեսված է ակունքի և մանկապարտեզի վերանորոգում :

Գյուղապետարանի կողմից արվում է ամեն ինչ աշխատանքները կազմակերպված և արդյունավետ անցկացնելու համար :

Համայնքի ղեկավարը բարձրացրեց հետևյալ հիմնախնդիրները

1. Մանկապարտեզի շենքի վերանորոգում
2. Մշակույթի տան վերանորոգում
3. Համայնքի կոյուղու վերանորոգում
4. Գյուղապետարանի շենքի վերանորոգում
5. Հուշարձանի վերանորոգում
6. Նոր ջրագծի կառուցում
7. Գրադարանի շենքի վերանորոգում

Տանձուտ համայնքի ղեկավար

Մ. Պետրոսյան



Ք Ա Ղ Վ Ա Ճ Ք

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ղեկավարի 2013թվականի 1-ին կիսամյակի հաշվետու ժողովի արձանագրությունից կայացած 10.07.2013թ. ժամը 14-00-ին

մասնակցությամբ մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ Ս. Բաղդասարյանի, ավագանու անդամների, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների և համայնքի թվով 20 բնակիչների

նախագահությամբ՝ Մ. Միքայելյանի

քարտուղարությամբ՝ Հ. Գրիգորյան

Լսեցին – Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ղեկավարի 2013թվականի 1-ին կիսամյակի հաշվետվությունը կատարած աշխատանքների մասին

/գեկ. Մ. Պետրոսյան/

Արտահայտվեցին համայնքի բնակիչներ Հարություն Հայրապետյանը, Վարուժան Գրիգորյանը, Հրաչյա Մինասյանը

Ելույթ ունեցողները նշեցին, որ համայնքի ղեկավարը իր ելույթում մանրամասն ներկայացրեց կատարած աշխատանքները և համայնքի ղեկավարի 2013թվականի 1-ին կիսամյակի աշխատանքները գնահատում ենք բավարար:

Որոշեցին –

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի ղեկավար Միսիթար Պետրոսյանի 2013թվականի 1-ին կիսամյակի հաշվետվությունը կատարած աշխատանքների մասին գնահատել բավարար:

2. Ժողովում արձանագրվեց գյուղում առկա հետևյալ հիմնախնդիրները

1. մանկապարտեզի շենքի վերանորոգում

2. մշակույթի տան վերանորոգում

3. համայնքի կոյուղագծի վերանորոգում

4. գյուղատարանի շենքի վերանորոգում

5. հուշարձանի վերանորոգում

6. խմելու նոր ջրագծի կառուցում

7. գրադարանի շենքի վերանորոգում

3. հանձնարարել համայնքի ղեկավարին բարձրացված հարցերի լուծման համար դիմել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան համապատասխան աջակցություն և օգնություն ստանալու համար:

Միստի նախագահ՝

Մ. Միքայելյան

քարտուղար՝

Յ. Գրիգորյան

Իսկականի հետ ճիշտ է

Յ. Գրիգորյան



Ստանալով իմ կողմից ներկայացված հարցերի լուծման համար դիմել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան համապատասխան աջակցություն և օգնություն ստանալու համար:

Միստի նախագահ՝

Մ. Միքայելյան

քարտուղար՝

Յ. Գրիգորյան

Իսկականի հետ ճիշտ է

Յ. Գրիգորյան